

ՄԱՍԵՆԵՆՕՍԸԱԿԸՆ.

ՅՈՒՎԱԿԱՆՆԵՒՍ ԿՈՍՏԱՆԵՆԵՆՑ. Հիրակի լեզենդա-  
ներից և ժողովրդա-  
կան կեանքից. Ալեք-  
սանդրապոլ. տպար.  
Մալխ. 1896. 8 78.  
գինն է 30 կոպ.

Սա մի ժողովածու է 22 ոտանաւորների, ու-  
րոնցից 13 Հիրակի լեզենդաներիցն են, իսկ մնա-  
ցեալները ժողովրդական կեանքից, ժողովրդական  
բանաստեղծութեան ոգին և կորովը հնչումեն այս  
երգերի միջից և իւրաքանչիւրը զրանցից հայի սրտի  
մի մի թեկերն է հնչեցնում սակայն ափսոս որ այդ  
ներքին արժեքին չէ համապատասխանում արտաքին,  
գեղարուեստական ձևն, որ շատ անմշակ է, Պ. Յ.  
Վ. գիտէ ընտրել ժողովրդական ստեղծագործութիւն-  
ներից բուն գեղարուեստականը, որ սպացոյց է  
բանաստեղծական ճաշակի, բայց ամենագեղեցիկ  
նիւթն անգամ անտաշ ձևի տակ իւր արժեքի մեծ  
մասը կորցնում է, ուստի խորհուրդ ենք տալիս հե-  
ղինակին ժողովրդական բանաստեղծութեան գոհար-  
ները լաւ մշակել, մանաւանդ ուշք դարձնել տա-  
ղաչափութեան, լեզուի գեղեցկութեան և ներգաշ-  
նակութեան վրայ և ամենայն չափաւոր տող ոտա-  
նաւոր չը համարել:

Կ. ԿՈՍՏԱՆԵՆԵՆՑ. 'ն որ ժողովածու է Գ.  
Պրակ. Միջնագրա-  
րեան Հայոց տաղերու  
ոտանաւորներ, Թիֆ-  
լիզ, տպ. Շարաձէի, եր. 69,  
գինն է 20 կոպ.

Մեր միջնագրեան բանաստեղծութեան մէջ  
են թաղուած հայ ժողով. բանաստեղծութեան  
հնագոյն գանձերն, որ ցարք անձանթ թէին մնացել  
հայ գրագէտներին, մեր նախկին զարերի բանաս-  
տեղծներն մինչև Թ. գարու սկիզբը հլու հպա-  
տակ են եղել ժողովրդական բանաստեղծութեան  
աւանդութիւններին և եղանակներին, միայն նորա-  
գոյն բանաստեղծներն են, որ օտար աւանդութիւն-  
ների ու եղանակների գերի են, ուստի ժամանակ է  
հնի վրայ ևս ուշադրութիւն դարձնելու: Սակայն  
այս չէ միայն մեր միջնագրեան բանաստեղծու-  
թիւնների ժողովելու օգուտն, զրա զխաւոր նպատա-  
կը գրականական, պատմական և լեզուական է, ու-  
րովհետև զրանց մէջ պահպանուած են հին գրական  
աւանդութիւններ, պատմական անցքեր և լեզուի հա-  
րուստ և անյայտ գանձ, Այս երրորդ ժողովածուի  
մէջ կան 18 երգեր, որոնց հեղինակներից 10 հոգի  
յայտնի են, առանձին ուշադրութեան արժանի են

ծայրայանգերն (Refrain,) որ անշուշտ ժողովրդական  
են, օրինակ.

«Մի թափիր վարդ, մի թափիր  
Մի լափեր վարդ,  
կամ

«Այ լից ու տուր, այ լից ու տուր  
Անապակեդ այ լից ու տուր:

Հայ գրականութեան ուսումնասիրողների հա-  
մար այս երգերն մեծագին գանձեր են:

ՅՈՒՎ. ԹՈՒՄԱՆԵՆԵՆՑ. 1. Մծիրի, Լերմոնտովի,  
Հրատ. Փ. Վ. 1896. տպ.  
Յ. Մարտ. գինն է 15 կոպ.  
2. Դաշնակներ, Հրատ.  
Փիլ. Վարդազարեանի Թ.  
1896. տպ. Յ. Մարտ.  
գինն է 15 կոպ.

Պ. Վարդազարեանն ամսական մի երկու այս-  
պիսի փոքրիկ և գեղեցիկ տպագրուած տետրակներ  
է հրատարակում, որոնք բոլորն էլ ցարդ Յ. Թու-  
մանեանցի գրչիցն են դուրս եկած: Գովելի է այս  
ձեռնարկութիւնն և շնորհակալութեան արժանի  
քանի որ դրա նպատակն է մեր գրականութիւնը  
հարստացնել, բանաստեղծական դիւրամտաշելի եր-  
կերով, Պ. Թումանեանցի թարգմանութիւնը Լեր-  
մոնտովից աւելի յաջողակ է, քան թէ Բայրընից  
արած թարգմանութիւնը, երևի ընագրի գիւրամատ-  
չելի լինելն է պատճառը: Մծիրին բնութեան մի  
բունն երգ է, զրուած է անպայման գեղարուես-  
տական լեզուով, որ և առանձին արժեք է տալիս  
զրան ուս գրականութեան մէջ. պ. Թ. թարգմա-  
նութիւնը յաջող հատուածների հետ ունի և ան-  
յաջող ու անմշակ հատուածներ, զրա պատճառն է  
անշուշտ շուտով լոյս հանելու տենչը, մեր նոր բա-  
նաստեղծներին լեզուն ու ձևը մշակելու աշխատան-  
քը կրկին ու կրկին պիտի յանձնարարենք: Դաշ-  
նակների բանաստեղծական արժեքը միջակ է: հին  
ու նոր եղանակներ (Mativ) են զրանք և չունեն ա-  
ռանձնայատուկ նշաններ, յարգելի հեղինակին խոր-  
հուրդ կրտայինք ջանասիրութեամբ մեծ քնարերգ-  
ներին ուսումնասիրել և չը շտապել դաշնակներն  
արագ արագ հնչեցնելու:

Ս. Բ.

ՍՍՏՅՈՒՆԵՐ ԳՐԳԵՐ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԻՆ ՈՒԹՏԻ պատմութեանց ըն-  
դարձակ աշխարհարառը լուսարանութեամբ և աշ-  
խարհի անցքերով աշխատասիրեց Գ. Բ. Մանդա-  
կունի. Թիֆ. 1896.

2. Исследование и статьи Н. О. Эмина. Москва.  
1896.

3. ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍԵՆԵՆՕՍԸԱԿԸՆ, Ի.—Վարդա-  
պետութիւն առաքելոց և այլն  
Հ. Յ. Տաշեան. Վիեննա. 1896.